ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 235-Ա « 16 » հունվարի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի հ.13-Ն հրամանով.

1.Հաստատել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թվով 6 թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներն անցկացվելու են Երևանի քաղաքապետարանի՝ Արգիշտիի փողոց հ.1 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի խորհրդակցությունների անցկացման հ.1 դահլիճում:

3. Հանձնարարել.

3.1 Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը՝ ապահովել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թվով 6 թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների նախապատրաստական աշխատանքների իրականացումը և հաստատված ժամանակացույցի համաձայն՝ մրցույթներն անցկացնելու մասին հայտարարության հրապարակումը՝ http://www.azdarar.am Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.

3.2 Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչությանը՝ ապահովել սույն որոշման 3.1. կետում նշված հայտարարության հրապարակումը՝ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում (www.yerevan.am):

4.Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թվով 6 թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց փաստաթղթերն ընդունվելու են Երևանի քաղաքապետարանի՝ Արգիշտիի փողոց, հ.1 հասցեում գտնվող վարչական շենքի հ.212 սենյակում:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ կարող են հանձնել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության վրա:

6.Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
2026թ. հունվարի 16-ի
հ. 235 -Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժան համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար մրցույթներ անցկացնելու

Հ/Հ	Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը	Ծածկագիրը	Մրցույթ անցկացնելու օրը և ժամը	Հայտարարության հրապարակման օրը
1.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի գլխավոր մասնագետ	2.3-71	18.02.2026թ. Ժամը 11.00	16.01.2026թ.
2.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ	2.3-77	18.02.2026թ.	16.01.2026թ.
3.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի ծրագրավորման և մոնիտորինգի բաժնի գլխավոր մասնագետ	2.3-79	Ժամը 11.00	16.01.2026թ.
4.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի ծրագրավորման և մոնիտորինգի բաժնի գլխավոր մասնագետ	2.3-80	18.02.2026թ.	16.01.2026թ.
5.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության գործառնական բաժնի գլխավոր մասնագետ	2.3-83	Ժամը 11.00	16.01.2026թ.

6.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության գործառնական բաժնի գլխավոր մասնագետ	2.3-437	18.02.2026թ.	16.01.2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**